ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ձևավորված ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ- 17/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 11.07.2017թ. ժամը 11-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Մ.Դանիելյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լ. Հովհաննիսյանը, Վ.Գսպոյանը, Է.Արշակյանը, և քարտուղար Ռ. Խաչատրյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-17/4» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«Ագարակ» ԲԸԸ (ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Փարպի)**
2. **«Ագաթ - 777» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան,Շիրակի փակուղի 4)**
3. **«ԷԼՇԻՆ» ՍՊԸ (ՀՀ, Արարատի մարզ, գ. Սիսավան)**
4. **«Շահար» ՍՊԸ (ՀՀ, ք, Երևան, Իսահակյան թղմ.2/3շ,)**
5. **«Հիդրո Գրուպ» ՍՊԸ (ՀՀ, ք, Երևան, Ջրաշեն, I փող, II նրբ.տուն 1)**

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1 Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 **«Ագարակ» ԲԸԸ, «ԷԼՇԻՆ» ՍՊԸ, «Հիդրո Գրուպ» ՍՊԸ** կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

3.2 Մնացած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում/հայտում առկա փաստաթղթերում/ կան թերություններ, մասնավորապես՝

3.2.1 **«Շահար» ՍՊԸ** կողմից ներկայացված Հավելված 8 հանդիսացող տուժանքի մասին համաձայնագրի մաս կազմող վճարման պահանջագրում լրացվել է ներկայացման ամսաթիվը (լրացվում է շահառուի կողմից վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը)

3.2.2 **«Ագաթ - 777» ՍՊԸ** կողմից ներկայացված Հավելված 4 –ում՝ գնային առաջարկի հաշվարկում կա սխալմունք. 1333000 /մեկ միլիոն երեք հարյուր երեսուներեք հազար/-ի ԱԱՀ-ն կազմում է 266600 ՀՀ դրամ, սակայն գրված է 266000 ՀՀ դրամ:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

ՀՀ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի վարչական շենքի ընթացիկ վերանորոգման և հարդարման աշխատանքներ

Նախահաշվային գինն է 1659532 ՀՀ դրամ:

1-ին չափաբաժին.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/
1	«Ագարակ» ԲԸԸ	933333
2	«Ագաթ - 777» ՍՊԸ	1333000
3	«ԷԼՇԻՆ» ՍՊԸ	1600000*
4	«Շահար» ՍՊԸ	1100000*
5	«Հիդրո Գրուպ» ՍՊԸ	1250000

*Հանդիսանում է ԱԱՀ չվճարող

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը որոշեց.

1. Մերժել **«Ագաթ-777» ՍՊԸ, «Շահար» ՍՊԸ կողմից ներկայացված հայտերը՝ հիմք ընդունելով** ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 40-րդ կետի 4-րդ ենթակետը:

2. 1 Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել՝ **«Ագարակ» ԲԸԸ** -ին,

2.2 Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել՝ **«Հիդրո Գրուպ» ՍՊԸ -ին:**

3. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 11:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,

Ընդունվել է որոշում՝ կողմ՝4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Մ. Դանիելյան
Հանձնաժողովի անդամներ՝ _____ Լ. Հովհաննիսյան
_____ Է.Արշակյան
_____ Վ.Գսպոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ. Խաչատրյան